ԱԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԳՊԱ-ՄԱ-18/01

ք. Երևան «22» հունվարի 2018թ.

<<Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա>> հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Արամ Իսաբեկյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝Պատվիրատու), մի կողմից և <<Բևեռային ուղի >> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հակոբյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների և սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի:

1.2. Ծառայությունների մատուցումը սկսվում է պայմանագիրը ստորագրելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից սկսած, ցանկացած պահի՝ ըստ ներկայացված պահանջի երեք աշխատանքային օրվա ընթացքում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը եւ պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չիկարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին եՏեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.4 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին եւ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.Սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ Պատվիրատուի առաջին իսկ պահանջի դեպքում՝մեկ աշխատանքային օրվա ընթացքում /տեղափոխումը իրականացվում է կատարողի կողմից/:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույնպ այմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (ՀավելվածN 3):

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության մեկ միավորի գինը ներառյալ ԱԱՀ-ն, ներկայացված է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածում:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է երկկողմ ստորագրված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ տաս աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրի N1. 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,05 %-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 %-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսվա տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմեր ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետեանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների

ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ ե տվյալներ), կամ կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար:

7.2Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից: Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության : Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը: Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝պայմանով, որ՝ա) պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

բ) եթե դա պատվիրատուի գործողության կամ անգործության հետևանք չէ:

7.4 Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և պայմանագրի կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկուօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն

պայմանագրի N1, 2 և3 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ	«Բևեռային ուղի» ՍՊԸ
ք. Երևան, Իսահակյան 36	ք. Երևան, Մանանդյան 25շ. բն 6
ՀՎՀՀ 01505555	ՀՎՀՀ 02228306
Հ/Հ 11815000774800	Հ/Հ 15100323499010
«Անելիք բանկ» ՓԲԸ Տիգրան Մեծ մ/ճ	Բանկ՝ <<Արարատ բանկ ՓԲԸ Քաղաքացում մ/ճ
Ռեկտոր՝ Ա. Իսաբեկյան	Տնօրեն՝ Ա. Հակոբյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1

<<22>> հունվարի 2018թ. կնքված
պայմանագիր N ՀԳՊԱ-ՄԱ-18/01

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
ԱԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

N	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	Քարթրիջի լիցքավորում Թմբուկի փոխարինում Քարթրիջի վերանորոգում	HP LaserJet M1212 մոդելի սարքի քարթրիջ
2	Քարթրիջի լիցքավորում Թմբուկի փոխարինում Քարթրիջի վերանորոգում	Canon MF 4410 մոդելի սարքի քարթրիջ
3	Քարթրիջի լիցքավորում Թմբուկի փոխարինում Քարթրիջի վերանորոգում	Canon L11121E մոդելի սարքի քարթրիջ
4	Քարթրիջի լիցքավորում Թմբուկի փոխարինում Քարթրիջի վերանորոգում	Canon MF 4450 մոդելի սարքի քարթրիջ
5	Քարթրիջի լիցքավորում Թմբուկի փոխարինում Քարթրիջի վերանորոգում	HP LaserJet M1132 մոդելի սարքի քարթրիջ
6	Քարթրիջի լիցքավորում Թմբուկի փոխարինում Քարթրիջի վերանորոգում	HP Laser Jet 1018 մոդելի սարքի քարթրիջ
7	Քարթրիջի լիցքավորում Թմբուկի փոխարինում Քարթրիջի վերանորոգում	HP Laser Jet P1005 մոդելի սարքի քարթրիջ
8	Քարթրիջի լիցքավորում Թմբուկի փոխարինում Քարթրիջի վերանորոգում	Canon Laser Base MF 3220 մոդելի սարքի քարթրիջ
9	Քարթրիջի լիցքավորում Թմբուկի փոխարինում Քարթրիջի վերանորոգում	HP LaserJet P2055d մոդելի սարքի քարթրիջ
10	Քարթրիջի լիցքավորում Թմբուկի փոխարինում Քարթրիջի վերանորոգում	Canon F151300 մոդելի սարքի քարթրիջ
11	Տպիչի թերմոթաղանթի փոխարինում	HP և Canon միագույն տպիչների համար
12	Տպիչի վառարանի ռետինե լիսեռի փոխարինում	HP և Canon միագույն տպիչների համար
13	Տպիչի այլ վերանորոգում	HP և Canon միագույն տպիչների համար
14	Համակարգչի մայրական սալիկի փոխարինում	Համակարգչի մայրական սալիկի փոխարինում
15	Համակարգչի մայրական սալիկի նորոգում	Շարքից դուրս եկած դետալների փոխարինում
16	Համակարգչի օպերատիվ հիշողության փոխարինում	DDR1-DDR3 1-2GB

17	Համակարգչի կոշտ սկավառակի փոխարինում	HDD 500GB
18	Համակարգչի սնուցման բլոկի փոխարինում	450W
19	Համակարգչի սնուցման բլոկի նորոգում	Շարքից դուրս եկած դետալների փոխարինում
20	Համակարգչի նորոգում	Շարքից դուրս եկած դետալների փոխարինում
21	Անխափան սնուցման սարքի մարտկոցի փոխարինում	7-7.5 Ա/ժ
22	Անխափան սնուցման սարքի վերանորոգում	Շարքից դուրս եկած դետալների փոխարինում
23	Մոնիտորի վերանորոգում	Շարքից դուրս եկած դետալների փոխարինում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա»
հիմնադրամ
ք. Երևան, Իսահակյան 36
ՀՎՀՀ 01505555

Հ/Հ 11815000774800

«Անելիք բանկ» ՓԲԸ Տիգրան Մեծ մ/ճ

Ռեկտոր՝ Ա. Իսաբեկյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Բևեռային ուղի» ՍՊԸ

ք. Երևան, Մանանդյան 25շ. բն 6
ՀՎՀՀ 02228306

Հ/Հ 151003234599010

Բանկ՝ <<Արարատ բանկ ԲԲԸ Զարգացում մ/ճ>>

Տնօրեն՝ Ա. Հակոբյան

Կ.Տ.

Հավելված 2
<<22>> հունվարի 2018թ. կնքված
պայմանագիր N ՀԳՊԱ-ՄԱ-18/01

Գնման ժամանակացույց

N	Գնումը նախատեսվում է իրականացնել 2016թ. I-IV եռամսյակներում		
	Ծառայության անվանումը	Չափի միավորը	Միավորի գինը /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
1	Քաթրիջի լիցքավորում	հատ	1350
	Քարթրիջի վերանորոգում	հատ	3900
	Թմբուկի փոխարինում	հատ	4290
2	Քաթրիջի լիցքավորում	հատ	1350
	Քարթրիջի վերանորոգում	հատ	3900
	Թմբուկի փոխարինում	հատ	4290
3	Քաթրիջի լիցքավորում	հատ	1350
	Քարթրիջի վերանորոգում	հատ	3900
	Թմբուկի փոխարինում	հատ	4290
4	Քաթրիջի լիցքավորում	հատ	1350
	Քարթրիջի վերանորոգում	հատ	3900
	Թմբուկի փոխարինում	հատ	4290
5	Քաթրիջի լիցքավորում	հատ	1350
	Քարթրիջի վերանորոգում	հատ	3900
	Թմբուկի փոխարինում	հատ	4290
6	Քաթրիջի լիցքավորում	հատ	1590
	Քարթրիջի վերանորոգում	հատ	3900
	Թմբուկի փոխարինում	հատ	4290
7	Քաթրիջի լիցքավորում	հատ	1350
	Քարթրիջի վերանորոգում	հատ	3900
	Թմբուկի փոխարինում	հատ	4290
8	Քաթրիջի լիցքավորում	հատ	1590
	Քարթրիջի վերանորոգում	հատ	3900
	Թմբուկի փոխարինում	հատ	4290
9	Քաթրիջի լիցքավորում	հատ	1590

	Քարթրիջի վերանորոգում	հատ	3900
	Թմբուկի փոխարինում	հատ	4290
10	Քարթրիջի լիցքավորում	հատ	1590
	Քարթրիջի վերանորոգում	հատ	3900
	Թմբուկի փոխարինում	հատ	4290
11	Տպիչի թերմոթաղանթի փոխարինում	հատ	4800
12	Տպիչի վառարանի ռետինե լիսեռի փեխարինում	հատ	9000
13	Տպիչի այլ վերանորոգում	հատ	6300
14	Համակարգչի մայրական սալիկի փոխարինում	հատ	31500
15	Համակարգչի մայրական սալիկի նորոգում	հատ	6000
16	Համակարգչի օպերատիվ հիշողության փոխարինում	հատ	15000
17	Համակարգչի կոշտ սկավառակի փոխարինում	հատ	34500
18	Համակարգչի սնուցման բլոկի փոխարինում	հատ	7800
19	Համակարգչի սնուցման բլոկի նորոգում	հատ	3300
20	Համակարգչի նորոգում	հատ	6000
21	Անխափան սնուցման սարքի մարտկոցի փոխարինում	հատ	9000
22	Անխափան սնուցման սարքի վերանորոգում	հատ	6000
23	Մոնիտորի վերանորոգում	հատ	7500

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ

ք. Երևան, Իսահակյան 36

ՀՎՀՀ 01505555

Հ/Հ 11815000774800

«Անելիք բանկ» ՓԲԸ Տիգրան Մեծ մ/ճ

Ռեկտոր՝ Ա. Իսաբեկյան

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Բնեռային ուղի» ՍՊԸ

ք. Երևան, Մանանդյան 25շ. բն 6

ՀՎՀՀ 02228306

Հ/Հ 151003334590010

Բանկ՝ <<Ար[illegible] բանկ ԲԲԸ [illegible] մ/ճ>>

Տնօրեն՝ Մ. Հ[illegible]որյան

Կ.Տ.